Թիվ ՄՆԴ/1895/04/24 սնանկության գործով պարտապան «ՀԱՐՈՒԹ ՄԵԳԵՐՅԱՆ» ՍՊԸ պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառքի նպատակով կրկնաճուրդի կազմակերպման մասին

2026-11-23 17:03:21

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

09.11.2026թ. ժամը 11։00-ին ք.Երևան, Արաբկիր, Ն. Ադոնցի փողոց 7 շենք, 1/1 ոչ բնակելի տարածք հասցեում պարտապան «ՀԱՐՈՒԹ ՄԵԳԵՐՅԱՆ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ (աճուրդի կազմակերպիչ) Նարեկ Խաչիկյանի կողմից հրավիրված աճուրդ չի կայացել, քանի որ 1,2,3,7,8,15,16 լոտերով հայտ ներկայացրած մասնակիցը չի ներկայացել աճուրդին։
14.12.2026թ. ժամը 11։00-ին ք.Երևան, Արաբկիր, Ն. Ադոնցի փողոց 7 շենք, 1/1 ոչ բնակելի տարածք հասցեում պարտապան «ՀԱՐՈՒԹ ՄԵԳԵՐՅԱՆ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ (աճուրդի կազմակերպիչ) Նարեկ Խաչիկյանի կողմից կանցկացվի բաց դասական (գնի ավելացման) եղանակով աճուրդ։
Նույն ժամին նշանակված են մի քանի սնանկության գործերով աճուրդներ, որոնք կազմակերպվելու են կառավարիչ(ներ)ի մոտ սնանկության գործերի հերթական համարների հաջորդականությամբ։
Լոտերի համարները, անվանումը, նկարագիրը, մեկնարկային արժեքը ներկայացված է կից փաստաթղթում։
Ներկայացվող գույքի նկատմամբ առկա է սնանկության գործով կիրառված արգելանքներ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ 07.12.26թ. ժամը 18:00 կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով։ Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով, իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները, անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը

հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1 /մեկ/ տոկոսի չափով (բայց ոչ ավել, քան 300000 ՀՀ դրամ), նախավճարը՝ 5 /հինգ/ տոկոսի չափով մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապանի սնանկության հատուկ դրամային հաշվին («ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ՝ 1150008406746731)՝ որպես ստացող նշելով «ՀԱՐՈՒԹ ՄԵԳԵՐՅԱՆ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Նարեկ Խաչիկյան: Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի կազմակերպման, անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ: Հայտի ձևը, աճուրդի կանոնակարգը, հաղթողի կողմից ստորագրման ենթակա՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրության օրինակը ազատ կարող եք ստանալ աճուրդի կազմակերպչից (սնանկության գործով կառավարչից)՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով կառավարչին narek.xachikyan@mail.ru էլ հասցեով: Աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվելու են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի հաղթողը (այդ թվում՝ հարկային գործակալը) լոտի վաճառքի գինը պարտավոր է ամբողջությամբ վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում: Եթե լոտը իրավաբանական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գինը ներառում են նաև հարկերը, իսկ եթե ֆիզիկական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գնի մեջ չեն ներառվում հարկային գործակալների կողմից վճարման ենթակա հարկերը: Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Աճուրդի մասնակիցները կարող են Լոտը ուսումնասիրել սահմանված կարգով հայտը ներկայացնելուց հետո մինչև աճուրդին նախորդող օրը ներառյալ՝ աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ:
Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտերի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք փոստով կամ

էլեկտրոնային փոստով (narek.xachikyan@mail.ru) նամակ գրել սնանկության գործով կառավարչին։

Լոտերի ցանկ 11.pdf

37499991201

narek.xachikyan@mail.ru

ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ ԱՌԻՆՋ 1 ՄԿՐՇ., 1/8, 28